Մրցաշարերի վճարման կարգ

1. **Մասնակցային վճար**

- Յուրաքանչյուր մասնակցի համար սահմանվում է մասնակցության վճար, որի չափը կախված է մրցաշարի տեսակից (կարգային,վարկանիշային, միջազգային, արագ, կայծակնային) տարիքային խմբից(բոլոր տարիքային խմբերը՝ կախված մրցաշարից) և կարգավորող մարմնի որոշումից (մրցաշարի կանոնակարգ):
- Մրցաշարի հայտարարությունում նշվում են վճարի ճշգրիտ չափերն ու վճարման վերջնաժամկետը:

2. **Վճարման եղանակները**

Վճարումները կարող են իրականացվել՝

- Քարտային վճարում (առցանց հարթակների միջոցով):
- Բանկային փոխանցումով (ներկայացնելով հաշվեհամար):

Վճարի հաստատում՝

- Վճարումը կատարելուց հետո մասնակիցը իր էլեկտրոնային փոստին ստանում է հաստատման նամակ:

3. **Վերադարձման պայմաններ**

- Գումարի ետ վերադարձի դեպքում, անհրաժեշտ է անձը հաստատող փաստաթղթով մոտենալ Խանջյան 50Ա հասցե և դիմումի հիման վրա համապատասխան գումարը հետ ստանալ համապատասխան բանկային հաշվեհամարին**:**

Մասնակցության պայմաններ

1. **Իրավասու մասնակիցներ**

- Մրցաշարերին կարող են մասնակցել բոլոր շահագրգիռ անձինք՝ անկախ սեռից և տարիքից՝ կախված մրցաշարի կարգից:
- Որոշ մրցաշարեր կարող են նախատեսված լինել միայն որոշ կարգ ունեցող կամ որոշ տարիքային խմբի շախմատիստների համար:

2. **Գրանցում**

- Մասնակցելու համար անհրաժեշտ է նախապես գրանցվել առցանց https://chessassociation.am/web/home-page կայքում՝ լրացնելով համապատասխանաբար բոլոր դաշտերը:
- Գրանցումը համարվում է ավարտված միայն մասնակցային վճարի կատարումից հետո:

Արդյունքների հրապարակման կարգ

1. **Մրցաշարի ընթացք**

- Մրցաշարի յուրաքանչյուր խաղափուլի արդյունքները հրապարակվում են նույն օրը՝ մրցաշարի պաշտոնական կայքում կամ հայտարարված հարթակներում (https://chess-results.com/)

2. **Վերջնական արդյունքներ**

- Վերջնական դասակարգման աղյուսակը և մրցանակակիրների ցանկը հրապարակվում են մրցաշարի ավարտից հետո:

3. **Կարգերի ստացում՝**

   Մրցաշարի ավարտից հետո հաշվարկվում են կարգերը՝ կարգ լրացրած մասնակիցների անունները հրապարակվում են սոցիալական հարթակներով:

4. **Մրցանակների շնորհում՝**

   Գավաթներ, դիպլոմներ, հուշանվերներ պարգևատրումը կատարվում է մրցաշարի ավարտից հետո, դրամական պարգևները փոխանցվում են մրցանակակիրների հաշվեհամարներին՝ կախված մասնակցի կողմից անհրաժեշտ տեղեկատվության (Անձը հաստատող փաստաթուղթ, հաշվեհամար) տրամադրման ժամկետներից:

5. **Վարկանիշի հաշվարկ՝**

- ՖԻԴԵ վարկանիշ ունեցող մրցաշարերի դեպքում արդյունքները ներկայացվում են ՖԻԴԵ՝ համապատասխան շախմատիստների վարկանիշի թարմացման համար:

6. **Լուսաբանում**

- Արդյունքները հրապարակվուն են սոցիալական բոլոր հնարավոր հարթակներով՝ կցվում են հնարավոր լուսանկարներ, խաղերի նոտացիաներ և վերլուծություններ՝ ըստ կազմակերպիչների հնարավորությունների: